



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՉՆԱՐԱԿՈՐԹՅՈՒՆ

Հաստատված է
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի գիտական խորհրդի
2012 թվականի մայիսի 31-ի թիվ 11 նիստի որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ

ՀՊՏՀ ռեկտոր _____ Կ.Լ.Աթոյան

«_____» _____ 2014թ.

ԿԱՐԳ

Ներհամալսարանական գիտական դրամաշնորհների տրամադրման

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն կարգը սահմանում է գիտական գործունեության համար Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) արտաբյուջետային միջոցներից ֆինանսավորվող դրամաշնորհների ստացման (ըստ աշխատակիցների, ասպիրանտների, հայցորդների և ուսանողների կողմից ներկայացվող հայտերի) մրցույթի անցկացման, ներհամալսարանական գիտական դրամաշնորհների (այսուհետ՝ դրամաշնորհ) մրցույթի կազմակերպման ընթացակարգը:
- 1.2. Դրամաշնորհները համալսարանի գիտական գործունեության ֆինանսավորման ձևերից է և ծառայում է որպես համալսարանի ժամանակավոր ստեղծագործական կոլեկտիվների և առանձին գիտնական աշխատակիցների գիտական հետազոտությունների աջակցության միջոց:
- 1.3. Դրամաշնորհների նպատակներն են՝
 - հիմնարար և կիրառական գիտելիքները զարգացնելու ունակ, գիտամանկավարժական աշխատակիցների լիարժեք ներգրավումը գիտական գործունեության մեջ,
 - գիտահետազոտական աշխատանքների արդյունքների լիարժեք և արդյունավետ կիրառումը կրթական գործընթացում, համալսարանի գիտական ներուժի մեծացման և ազգային տնտեսության զարգացման հիմնախնդիրների լուծման վերաբերյալ առաջարկությունների մշակման գործում,
 - արդյունավետ աջակցություն գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը, ուսումնագիտական խմբերի ձևավորմանը և պրոֆեսորադասախոսական կազմի գիտական որակավորման բարձրացմանը,
 - ասպիրանտների, մագիստրոսների և ուսանողների ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում,
 - համալսարանի աշխատակիցների, ասպիրանտների, մագիստրոսների, ուսանողների կողմից ներկայացվող հայտերի նախապատրաստման փորձի կուտակումը արտաքին մրցույթներին մասնակցելու համար:

2. Դրամաշնորհների մրցույթի կազմակերպումը

- 2.1. Դրամաշնորհների մրցույթը հայտարարվում է համալսարանի ռեկտորի հրամանով:
- 2.2. Դրամաշնորհների մրցույթը հայտարարվում է յուրաքանչյուր տարի: Ֆինանսավորման քանակը և ծավալները որոշվում են ռեկտորի հրամանով յուրաքանչյուր տարի՝ համալսարանի զարգացման որոշակի փուլում նրա գերակայություններին համապատասխան:
- 2.3. Մրցույթն անցկացվում է ըստ հետևյալ ուղղությունների՝
 - ա) գիտությունների դոկտորի ղեկավարությամբ գիտական կոլեկտիվի կողմից կատարվող գիտահետազոտական նախագծի¹ ֆինանսավորման ստացման հայտ (կատարվում է ինչպես գիտնականների ստեղծագործական կոլեկտիվի կողմից, այնպես էլ միանձնյա),
 - բ) գիտությունների թեկնածուի ղեկավարությամբ կատարվող գիտահետազոտական նախագծի ֆինանսավորման ստացման հայտ (կատարվում է ինչպես գիտնականների ստեղծագործական կոլեկտիվի կողմից, այնպես էլ միանձնյա),
 - գ) երիտասարդ գիտնականի ղեկավարությամբ կատարվող գիտահետազոտական նախագծի ֆինանսավորման ստացման հայտ (կատարվում է ինչպես գիտնականների ստեղծագործական կոլեկտիվի կողմից, այնպես էլ միանձնյա, մինչև 35 տարեկան),
 - դ) ասպիրանտի կողմից կատարվող գիտահետազոտական նախագծի ֆինանսավորման ստացման հայտ,
 - ե) ուսանողական գիտահետազոտական նախագծի ֆինանսավորման ստացման հայտ,
 - զ) գիտահետազոտական նախագծի կատարման համար գիտաուսումնական խումբ² ստեղծելու հայտ,
 - է) գիտահետազոտական նախագծի կատարման համար գիտաուսումնական (գիտահետազոտական) լաբորատորիա³ ստեղծելու հայտ:
- 2.4. Մրցույթի հայտերը պետք է նախապատրաստվեն սույն կարգի համաձայն և ներկայացվեն մրցույթ հայտարարելու մասին համալսարանի ռեկտորի հրամանում նշված կարգով և ժամկետներում, ըստ հետևյալ ձևերի՝
 - սույն կարգի հավելված 2՝ «ա», «բ», «գ», «զ» և «է» տեսակի նախագծերի համար,

¹ Գիտահետազոտական նախագիծը մեկ կամ մի քանի ուղղությունների շրջանակներում գիտական և ուսումնական բնույթի հետազոտական աշխատանքի համալիր է՝ կրթական գործընթացում հետագա ներդրման նպատակով

² Գիտաուսումնական խումբը ուսանողներից, ասպիրանտներից, երիտասարդ դասախոսներից կամ գիտաշխատողներից կազմված կատարողների կոլեկտիվ է, որը ղեկավարում է գիտությունների դոկտորի կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող դասախոսը կամ գիտաշխատողը (համալսարանի հիմնական հաստիքային աշխատող): Առանձին դեպքերում գիտաուսումնական խումբը կարող է ստեղծվել ռեկտորի հրամանով՝ առանց մրցույթ հայտարարելու:

³ Գիտաուսումնական (գիտահետազոտական) լաբորատորիան ակադեմիական տարատեսակ հետազոտություններով զբաղվող պրոֆեսորադասախոսական կազմից, գիտաշխատողներից, ասպիրանտներից, ուսանողներից կազմված կոլեկտիվ է, որոնց ստեղծման հիմքը՝ կոլեկտիվ նախագծերի իրականացման համար համապատասխան միջավայրի ստեղծումն է: Գիտաուսումնական լաբորատորիաները կառուցվում են հորիզոնական համագործակցության սկզբունքներով և դառնում են ակադեմիական միջավայրի աճի հիմքը:

- սույն կարգի հավելված 3՝ «դ» տեսակի նախագծերի համար,
 - սույն կարգի հավելված 4՝ «ե» տեսակի նախագծերի համար:
- 2.5. Հայտերի գնահատման չափանիշներն են՝
- հետազոտության հայտարարված թեմայի արդիականությունը,
 - հետազոտության արդյունքների սպասվելիք գիտական նշանակությունը,
 - հետազոտության արդյունքների իրացման նշանակությունը,
 - հետազոտության մեթոդների նորույթի աստիճանը,
 - ֆինանսավորման հայցվող ծավալի հիմնավորվածությունը,
 - հայտի պատրաստման որակը. շարադրման գրագիտությունը և հաջորդականությունը, հիմնավորվածությունը, ըստ բովանդակության՝ ներկայացվող պահանջներին հայտի համապատասխանությունը,
 - հայտի և կից փաստաթղթերի ձևակերպման ճշտապահությունը:
- 2.6. Հայտերի փորձագիտությունն իրականացնում է համալսարանի դրամաշնորհների մրցութային հանձնաժողովը՝ հայտերի փորձաքննության անցկացման կանոնակարգին համաձայն (սույն կարգի հավելված 5):
- 2.7. Մրցութային ընտրության անցկացման համար յուրաքանչյուր տարի ստեղծվում է գիտական ներհամալսարանական դրամաշնորհների մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ մրցութային հանձնաժողով), որի կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով:
- 2.8. Մրցութային հանձնաժողովը՝
- կազմակերպում է նախագծերի փորձաքննությունը,
 - իր նիստերում ուսումնասիրում և քննարկում է փորձագետների եզրակացությունները և երաշխավորությունները,
 - փորձաքննության արդյունքների հիման վրա հաստատում է մրցութին թույլատրված նախագծերի ցանկը,
 - քվեարկությամբ ընդունում է դրամաշնորհներ շնորհելու մասին որոշում:

3. Մրցութի մասնակիցներին, նախագծերին և հայտերին ներկայացվող պահանջները

- 3.1. Դրամաշնորհների մրցութին կարող են ներկայացվել կոլեկտիվ կամ անհատական հայտեր, որոնք պատրաստվել են համալսարանի հաստիքային աշխատակիցների կողմից՝ պայմանով, որ ղեկավարը և նախագծի ենթադրվող բոլոր կատարողները համալսարանի աշխատակիցներ են, կամ ասպիրանտներ, կամ ուսանողներ:
- 3.2. Յուրաքանչյուր նախագծում կարող է լինել մեկ ղեկավար: Որպես ղեկավար՝ գիտնականը նախագծերի ցանկացած տեսակից կարող է ներկայացնել միայն մեկ հայտ:
- 3.3. Նախագծի ղեկավար գիտնականը կարող է հանդես գալ որպես կատարող մյուս հայտերից ևս մեկում: Ըստ ցանկացած հայտերի՝ նախագծի ղեկավար չհանդիսացող գիտնականը, որպես կատարող, կարող է հանդես գալ ոչ ավելի, քան գիտահետազոտական երկու նախագծում:
- 3.4. Մրցութին չի կարող ներկայացվել նախագծի հայտ, որի աշխատանքների կատարումն արդեն ֆինանսավորվում է (լրիվ կամ մասնակի) այլ նախագծի շրջանակներում ֆինանսավորման արտաքին աղբյուրից (թյուջետային կամ արտաթյուջետային):

4. Դրամաշնորհի հայցման մրցույթի ամփոփման կարգը

- 4.1. Հայտերի գիտական փորձաքննության վերջնաժամկետը լրանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում համալսարանը հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման սանդղակի կիրառմամբ, ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում մրցության հանձնաժողով՝ քննարկման:
- 4.2. Մրցութային հանձնաժողովը 5 աշխատանքային օրվա ընթացքում համալսարանի ռեկտորին է ներկայացնում հայտերի վարկանիշային ցանկը:
- 4.3. Մրցութային հանձնաժողովը քվեարկությամբ հաստատում է մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը, որում նշվում է՝
 - նիստին ներկա մրցութային հանձնաժողովի անդամները,
 - մրցույթի մասնակիցների կազմը,
 - մրցույթի արդյունքների մասին որոշման ընդունման հիմքերը,
 - մրցույթի հաղթողները՝ դրամաշնորհի չափերով:
- 4.4. Մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը հաստատվում է ռեկտորի հրամանով:
- 4.5. Համալսարանի ռեկտորը, ելնելով թեմատիկ ֆինանսավորման համար հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր մասնագիտության շեմային գնահատականը, որին հավասար կամ դրանից բարձր գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Համալսարանի ռեկտորը հաստատում է գիտական թեմաների ու դրանց ղեկավարների ցանկը՝ նշելով յուրաքանչյուր գիտական թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսական միջոցների չափը:
- 4.6. Մրցույթի արդյունքները հրապարակվում են համալսարանի պաշտոնական կայքում՝ մրցույթի հաղթողների հաստատումից հետո ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- 4.7. Մրցութին ներկայացված փաստաթղթերը չեն վերադարձվում: Մրցութին ներկայացված հայտերի նյութերը պահպանվում են համալսարանում՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
- 4.8. Հանձնաժողովի անդամներին արգելվում է հանձնաժողովի նիստերում քննարկվող հարցերին առնչվող տեղեկություններ տարածելը, այդ թվում՝ մրցույթում մասնակցության հայտերի քննարկման ընթացքի մասին, բացառությամբ հանձնաժողովի ընդունված որոշումների:
- 4.9. Հանձնաժողովը դրամաշնորհի ստացման հավակնորդներին չի տրամադրում տեղեկատվություն հաղթողների ցուցակում չընդգրկելու պատճառների մասին:
- 4.10. Կարգում չնախատեսված իրավիճակների առաջացման դեպքում որոշում է ընդունում համալսարանի գիտական խորհուրդը:

Համաձայնեցված է

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր

_____ Գ.Ի.Վարդանյան
«___» _____ 2014թ.

Գիտության բաժնի պետ
_____ Խ.Ա.Մխիթարյան
«___» _____ 2014թ.

Իրավաբանական բաժնի պետ
_____ Գ.Ա.Տոռոզյան
«___» _____ 2014թ.

Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի ռեկտոր Կ.Լ.Աթոյանին

նույն համալսարանի _____

_____ ամբիոնի

(անուն հայրանուն)

_____ ից

(ազգանուն)

(հասցե)

(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Ձեզ է ներկայացվում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու « _____ »
_____ »

վերնագրով նախագիծը:

Խնդրում եմ սահմանված կարգով ընթացք տալ:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

(_____)
(անուն ազգանուն)

« _____ » _____ 2014թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ
ՀԱՅՏ**

Հայտը հանձնված է « _____ » _____ 2014թ. Ծածկագիր՝ _____
(լրացվում է ՀՊՏՀ գիտության բաժնի կողմից)

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

1. Հայտի
 - վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերեն)

2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն)
 - Հայտի ղեկավարի
 - ազգանունը, անունը, հայրանունը _____
 - ծննդյան տարեթիվը _____
 - գիտական աստիճանը և կոչումը _____
 - պաշտոնը _____
 - հեռախոսը _____
 - էլեկտրոնային հասցեն _____
3. Ամբիոնը _____
4. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ տարի
5. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը _____
6. Հայցվող ընդհանուր գումարը _____ դրամ
7. Հայտի ղեկավարի ստորագրությունը _____
8. ՀՊՏՀ գիտության բաժնի պետի ստորագրությունը _____

« _____ » _____ 2014թ.

Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ⁴

ՆԱԽԱԳԻԾ⁵

⁴ Համառոտ պարբերությամբ ներկայացնել նախագծի նպատակները՝ հայերեն:

⁵ Ներկայացնել մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը:

1. 8 էջի սահմաններում ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, թեմայի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները:
2. 2 էջի սահմաններում նշել տվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները:
3. Օգտագործված գրականության ցանկը:

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Ազգանունը, անունը, հայրանունը _____
 2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը _____
 3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն) _____
 4. Գիտական աստիճանը և կոչումը _____
 5. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը

 6. Հրատարակված
 - գիտական հոդվածներ (թիվը) _____
 - մենագրություններ (թիվը) _____
 7. Արտոնագրեր (թիվը) _____
 8. Լիցենզիաներ (թիվը) _____
 9. Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարեթիվը, հատորը, էջերը)
 - 1) _____
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)
 10. Ստացված դրամաշնորհները
 - 1) _____
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)
- « ____ » _____ 2014թ. _____
(ղեկավարի ստորագրությունը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ*

Ազգանունը, անունը, հայրանունը (հայերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոսը (աշխատանքային, տան, բջջային)	
Էլեկտրոնային հասցեն	
Նախագծի հետ առնչվող հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարեթիվը, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի	
1.	
2.	

* Լրացվում է յուրաքանչյուր կատարողի համար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ
ՀԱՅՏ**

Հայտը հանձնված է « _____ » _____ 2014թ. Ծածկագիր՝ _____
(լրացվում է ՀՊՏՀ գիտության բաժնի կողմից)

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

1. Հայտի
 - վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերեն)

2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն)
 - Հայտի ղեկավարի
 - ազգանունը, անունը, հայրանունը _____
 - ծննդյան տարեթիվը _____
 - պաշտոնը _____
 - հեռախոսը _____
 - էլեկտրոնային հասցեն _____
3. Ամբիոնը _____
4. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ տարի
5. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը _____
6. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ
7. Հայտի ղեկավարի ստորագրությունը _____
8. ՀՊՏՀ գիտության բաժնի պետի ստորագրությունը _____

« _____ » _____ 2014թ.

Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ⁶

ՆԱԽԱԳԻԾ⁷

⁶ Համառոտ պարբերությամբ ներկայացնել նախագծի նպատակները՝ հայերեն:

⁷ Ներկայացնել մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը:

4. 8 էջի սահմաններում ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, թեմայի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները:

5. 2 էջի սահմաններում նշել տվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները:

6. Օգտագործված գրականության ցանկը:

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Ազգանունը, անունը, հայրանունը _____
2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը _____
3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն) _____
4. Գիտական աստիճանը _____
5. Հրատարակված
- գիտական հոդվածներ (թիվը) _____
6. Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարեթիվը, հատորը, էջերը)

_____ (անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

7. Ստացված դրամաշնորհները

_____ (անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

« ____ » _____ 2012թ.

_____ (ղեկավարի ստորագրությունը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ*

Ազգանունը, անունը, հայրանունը (հայերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոսը (աշխատանքային, տան, բջջային)	
Էլեկտրոնային հասցեն	
Նախագծի հետ առնչվող հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարեթիվը, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի	
1.	
2.	

* Լրացվում է յուրաքանչյուր կատարողի համար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ
ՀԱՅՏ**

Հայտը հանձնված է « _____ » _____ 2012թ. Ծածկագիր՝ _____
(լրացվում է հանձնման ժամանակ)

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

1. Հայտի
 - վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերեն)

2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն)
 - Հայտի ղեկավարի
 - ազգանունը, անունը, հայրանունը _____
 - ծննդյան տարեթիվը _____
 - պաշտոնը _____
 - հեռախոսը _____
 - էլեկտրոնային հասցեն _____
3. Ամբիոնը _____
4. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ տարի
5. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը _____
6. Աշխատանքի վարձատրության (ներառյալ գործատուի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները) գումարը _____ հազար դրամ
7. Վերադիր ծախսերի գումարը _____ հազար դրամ
8. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ
9. Հայտի ղեկավարի ստորագրությունը _____
10. Համալսարանի գիտական քարտուղարի ստորագրությունը _____

« _____ » _____ 2012թ.

Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ⁸

ՆԱԽԱԳԻԾ⁹

⁸ Համառոտ պարբերությամբ ներկայացնել նախագծի նպատակները՝ հայերեն:

⁹ Ներկայացնել մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը:

7. 8 էջի սահմաններում ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, թեմայի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները:

8. 2 էջի սահմաններում նշել տվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները:

9. Օգտագործված գրականության ցանկը:

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Ազգանունը, անունը, հայրանունը _____
2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը _____
3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն) _____
4. Գիտական աստիճանը _____
5. Հրատարակված գիտական հոդվածներ (թիվը) _____
6. Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարեթիվը, հատորը, էջերը)

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

7. Ստացված դրամաշնորհները

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

« _____ » _____ 2012թ.

(ղեկավարի ստորագրությունը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ*

Ազգանունը, անունը, հայրանունը (հայերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոսը (աշխատանքային, տան, բջջային)	
Էլեկտրոնային հասցեն	
Նախագծի հետ առնչվող հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարեթիվը, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի	
1.	
2.	

* Լրացվում է յուրաքանչյուր կատարողի համար

Հայտերի փորձաքննության կազմակերպումը

- 1.1. Մրցութային մասնակիցներին որոշելու մասին արձանագրության հաստատումից հետո, ՀՊՏՀ գիտության բաժինն անցկացնում է նյութերի փորձաքննություն՝ ըստ տվյալ դրամաշնորհի համար սահմանված չափանիշների: 10 օրացուցային օրվա ընթացքում իրականացվում է գիտական փորձաքննություն:
- 1.2. Գիտական փորձաքննության խնդիրը հայտարարված գիտահետազոտական աշխատանքի գիտական, գիտատեխնիկական և գործնական արժեքի գնահատումն է: Անհրաժեշտության դեպքում, գիտության բաժինը փորձաքննության համար կարող է ներգրավել անկախ փորձագետի (ով չի հանդիսանում այն ստորաբաժանման աշխատակիցը, որտեղ աշխատում է հայտատուն):
- 1.3. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն երեք արտաքին փորձագետի կողմից: Որպես փորձագետներ ընտրվում են տվյալ ոլորտի մասնագետները: Յուրաքանչյուր հայտի համար փորձագետը լրացնում է համալսարանի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին:
- 1.4. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում է հայտի գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում հետազոտական խմբի ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը թեման իրականացնելու համար, երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնագետների ընդգրկվածությունը, թեմայի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններով պայմանավորված այլ դրույթներ:
- 1.5. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների գնահատականների միջին թվաբանականն է:
- 1.6. Փորձագետներն ու գիտական փորձաքննությունը կազմակերպող անձինք հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկություններ չեն հաղորդում:

«ա», «բ», «գ» և «դ» տեսակի նախագծերի համար

Գնահատման չափանիշները	Թվային գնահատականը՝ միավորներով	Գնահատականը միավորներով			Փորձագետների միջին թվաքանակային գնահատականը
		1 փորձագետ	2 փորձագետ	3 փորձագետ	
Ներկայացված հետազոտության թեմայի արդիականությունը	1-ից 15 միավոր				
Հետազոտության արդյունքների սպասվելիք գիտական նշանակությունը	1-ից 15 միավոր				
Հետազոտության արդյունքների իրացման նշանակությունը	1-ից 10 միավոր				
Հետազոտության մեթոդների նորույթի աստիճանը (գիտական գործիքակազմը)	1-ից 10 միավոր				
Ֆինանսավորման հայցվող ծավալի հիմնավորվածությունը	1-ից 10 միավոր				
Հայտի պատրաստման որակը. շարադրման գրագիտությունը և հաջորդականությունը, հիմնավորվածությունը, ըստ բովանդակության՝ ներկայացվող պահանջներին հայտի համապատասխանությունը	1-ից 30 միավոր				
Հայտի և կից փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը	1-ից 30 միավոր				
ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ					

«ե», «զ» տեսակի նախագծերի համար

Գնահատման չափանիշները	Թվային գնահատականը՝ միավորներով	Գնահատականը միավորներով			Փորձագետների միջին թվաքանակային գնահատականը
		1 փորձագետ	2 փորձագետ	3 փորձագետ	
Ներկայացված հետազոտության թեմայի արդիականությունը	1-ից 30 միավոր				
Հետազոտության արդյունքների իրացման նշանակությունը	1-ից 20 միավոր				
Ֆինանսավորման հայցվող ծավալի հիմնավորվածությունը	1-ից 10 միավոր				
Հայտի պատրաստման որակը. շարադրման գրագիտությունը և հաջորդականությունը, հիմնավորվածությունը, ըստ բովանդակության՝ ներկայացվող պահանջներին հայտի համապատասխանությունը	1-ից 30 միավոր				
Հայտի և կից փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը	1-ից 30 միավոր				
ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ					